ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 29-Ա
23 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.00891 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Կապանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 723-Ն, 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286, Կապան քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 13-ի «Համայնքի սեփականություն համարվող հողամասերը հրապարակային սակարկություններով /աճուրդով/ օտարելու մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 93-Ն որոշումների և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության _8_ կողմ, _0_ դեմ, _0_ ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնքի Կապան քաղաքի Շինարարների փողոցի թիվ 3/7 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության բնակելի

կառուցապատման հողերից 0.00891 հա հողամասը /ծածկագիր 09-001-0630-0450/ բնակելի կառուցապատման նպատակով (բնակելի տուն կառուցելու) աճուրդով վաճառել՝ մեկնարկային գին սահմանելով 75740,0 /յոթանասունհինգ հազար յոթ հարյուր քառասուն/ դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ (8)՝

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ	ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ	ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2018թ փետրվարի 27
ք. Կապան